

«ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ»

Միջվարժարանային հանրապետական օլիմպիադա 2019 թ.

10 – րդ դասարան

1. Դուրս գրել դաշնային պետությունները _____ 1 միավոր

Նիդերլանդներ, Մալայզիա, Թաիլանդ, Ճապոնիա, Ավստրիա, Հորդանան,

Նիգերիա, Լեհաստան, Օման, Մարոկկո, Լետոն, Վենեսուելա, Նիկարագուա

2. Դուրս գրել այն պետությունները, որոնք ելք չունեն դեպի ծով կամ օվկիանոս _____ 1
միավոր

Հայաստան, Թուրքիա, Մալայզիա, Հունգարիա, Նիգերիա, Բելգիա, Իրան,

Եմեն, ՀԱՀ, Լետոն, Էրիթրեա, Լիբանան, Չիլի, Բոլիվիա

3. Ի՞նչ են ստեպը, լյանոսը, պրերիան, վադին: Դրանցից յուրաքանչյուրը որտե՞ղ է գտնվում _____ 2
միավոր

4. Երկրի բնակչության թիվը 11 մլն մարդ է, բնական աճի գործակիցը՝ 0.8 %: Տարվա ընթացքում
ներգադթել են 250000 մարդ, արտագադթել՝ 180000: Որոշել՝ _____ 2 միավոր

ա/ բնակչության բնական աճը

բ/ բնակչության թիվը 1 տարի հետո

5. Մերձարևադարձային կլիմայական գոտու ո՞ր մարզն է համարվում մարդու գործունեության
համար առավել նպաստավոր և ինչո՞ւ: _____ 1 միավոր

6. Թվարկել աշխարհի 6 միապետություն _____ 1.5 միավոր

7. ՀՀ վերաբերյալ ո՞ր պնդումներն են ճիշտ, որոնք սխալ _____ 1.5 միավոր

ա/ Վիրահայոց լեռները պատկանում են Փոքր Կովկասի արտաքին շարին

բ/ 1913 թ. արդյունաբերական ձեռնարկություններ կային ընդամենը 6 բնակավայրում

գ/ Կոտայքի մարզը բնակչության թվով և միջին խտությամբ ՀՀ – ում չորրորդն է

դ/ Անապատակիսաանապատային գոտին ՀՀ – ում զբաղեցնում է տարածքի 10 %-ը

ե/ Թվաքանակով երկրորդ տեղում եզդիներն են

զ/ Պտղատու տնկարկների կառուցվածքում գերակշռում են կորիզավորները

8. Տրված ժողովուրդներից յուրաքանչյուրի դիմաց նշել համապատասխան լեզվախումբը ___1
միավոր

հունգարներ, յակուտներ, իռլանդացիներ, լիտվացիներ

9. Լրացնել բաց թողնված բառերը _____2 միավոր

Հնդկաստանը վարչատարածքային կառուցվածքով _____ է, տարածքի թիվը կազմում է _____
մլն կմ²: Բնակչության _____ %-ը դավանում է հնդուականություն, իսկ 13 %-ը՝ _____:

10. Հաշվել Գրենլանդիա կղզու զբաղեցրած մակերեսը¹: 20000000 մասշտաբի քարտեզի վրա: ___2
միավոր

11. Նշված պետությունները դասակարգել ըստ տարածքի նվազման կարգով ___1 միավոր

ա/ ԱՄՆ

գ/ Ղազախստան

բ/ Նիգեր

դ/Ալժիր

12. Գրել ՀՀ՝ Կուրի ավազանին պատկանող գետերի համարները _____2
միավոր

1. Ոսկեպար

3. Դեբեդ

5. Արփա

7. Գետիկ

2. Արաքս

4. Ողջի

6. Աղստև

8. Ազատ

13. Կողմնադրում այդ կղզին ամենախոշոր, սակայն ամենից նոսր բնակեցվածն է: Այն միմյանց միջև
բաժանել են 3 պետություն: Կղզին հարուստ է նավթով, իսկ տնկատափերում (պլանտացիա)
աճեցնում են արտահանության կարևորագույն մշակաբույսը: Կղզու բնակչությունը դավանում է
իսլամ: Այդ կղզու խորքերում ոչ հեռու անցյալում հայտնաբերեցին նախնադարյան ցեղեր: Ո՞րն
է այդ կղզին, ո՞ր պետությունների միջև է բաժանված: Ո՞րն է աճեցվող գլխավոր մշակաբույսը:
Ո՞ր ծովերն են ողողում կղզու ափերը: -----2 միավոր